# Արձանագրություն N 2

## «ՀԱՊ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Արամի 1

«10» «01» 2017թ
ժ.15:00

**Մասնակցում էին՝**
Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մարտիրոսյանը, Դ. Բեգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյան

### 1. Պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

(Լ. Հովհաննիսյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | | |
|---|---|---|---|
| 1. | <<Էյ-Էմ-Էյչ Աուդիտ>> ՓԲԸ | - | ք. Երևան, 0086, Շիրակի 56/1 բն.35, հեռ. 091883010, ՀՎՀՀ 02246786, amhaudit@amhaudit.am, տնօրեն՝ Ա. Հովհաննիսյան |
| 2. | <<ՍՕՍ-Աուդիտ>> ՍՊԸ | - | ք. Երևան, 0037, Ա. Տիգրանյան 38-55, հեռ. 010201151, ՀՎՀՀ 00051316, info@sosaudit.am, տնօրեն՝ Մ. Ղազարյան |
| 3. | <<ԱՍԱՏՐՅԱՆՍ>> ՍՊԸ | - | ք. Երևան, 0010, Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ, հեռ. 060532323, ՀՎՀՀ 02618043, general@asatryans.com, տնօրեն՝ Ս. Ասատրյան |
| 4. | <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ | - | ք. Երևան, 0010, Հանրապետության փ. 22 տարածք 16, 5-րդ հարկ, հեռ. 010544301, ՀՎՀՀ 02586575, info@bakertillyarmenia.com, տնօրեն՝ Փ. Գևորգյան |
| 5. | <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ | - | ք. Երևան, 0071, Նուբարաշեն 10փ. 6տուն, հեռ. 010572842, ՀՎՀՀ 00433357, staff@group-avc@com, տնօրեն՝ Մ. Պետրոսյան |

**Որոշում թիվ 1.**

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով.

- համապատասխանում են՝ բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, բացառությամբ <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Մասնակիցների գնային առաջարկը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չ/հ | Գնման առարկան | <<Էյ-Էմ-Էյչ Աուդիտ>> ՓԲԸ | | <<ՍՕՍ-Աուդիտ>> ՍՊԸ | | <<ԱՍԱՏՐՅԱՆՍ>> ՍՊԸ | | <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ | | <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | առանց ԱԱՀ | ընդամենը ԱԱՀ | առանց ԱԱՀ | ընդամենը ԱԱՀ | առանց ԱԱՀ | ընդամենը ԱԱՀ | առանց ԱԱՀ | ընդամենը ԱԱՀ | առանց ԱԱՀ | ընդամենը ԱԱՀ |
| 1. | Աուդիտորական ծառայություններ | 1166000 | 1399200 | 3915000 | 4698000 | 1400000 | 1680000 | 3100000 | 3720000 | 935000 | 1122000 |

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթրիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

**Որոշում թիվ 2.**

Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, համակարգողն ամփոփեց ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները | | Գնահատականը | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները<br>Մասնակցի անվանումը | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | <<Էյ-Էմ-Էյչ Աուդիտ>> ՓԲԸ | <<ՍՕՍ-Աուդիտ>> ՍՊԸ | <<ԱՍԱՏՐՅԱՆՍ>> ՍՊԸ | <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ | <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ |
| 1 | Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Բավարար Անբավարար | բավարար | բավարար | բավարար | բավարար | բավարար |
| 2 | Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին. | Բավարար Անբավարար | բավարար | բավարար | բավարար | բավարար | անբավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | **Բավարար Անբավարար** | **բավարար** | **բավարար** | **բավարար** | **բավարար** | **անբավարար** |

**Որոշում թիվ 3.**

Հանձնաժողովը որոշեց`

1. Մերժել <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ հայտում ներառված վճարման պահանջագրի ներկայացման ամսաթիվը լրացվել էր Վճարողի կողմից հայտի ներկայացման օրը, ինչ չի համապատասխանում հրավերի պահանջներին, որի համաձայն այն լրացվում է շահառուի կողմից` վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:
2. Բացառությամբ <<Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ>> ՍՊԸ-ի, մնացած բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ` հրավերով սահմանված` ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

**Որոշում թիվ 4.**

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց` 1-ին և հաջորդաբար տեղը զբաղեցնող ճանաչել հետևյալ մասնակիցներին.

- 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել<<Էյ-Էմ-Էյչ Աուդիտ>> ՓԲԸ -ին
- 2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել` <<ԱՍԱՏՐՅԱՆՍ>> ՍՊԸ –ին
- 3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲԸ-ին

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

**Որոշում թիվ 5.**

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց`

1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների` Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ` ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

## 2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ. Հովհաննիսյան)

**Որոշում թիվ 6.**

Հանձնաժողովը որոշեց «ՀԱՊ-ՊԸԾՁԲ-17/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ-ի կողմից ներկայացված համապատասխան եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը ժամը 15:00-ին, ք. Երևան, Արամի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում` կողմ` 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ` | | Լ. Հովհաննիսյան |
| Անդամներ` | | Վ. Մարտիրոսյան |
| | | Դ. Բեգյան |
| Քարտուղար` | | Հ.Ղազարյան |